

## ԱՆԽԱՐՀԻ ԼԵԶՎԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՈՒ ՊԱՏՄԱՍՆՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՍՍՏԵՔՍՈՒՄ

Ս. Ա. ԱՐՈՒՅԱՍՅԱՆ

Միջազգային համագործակցության ընդլայնման արդի պայմաններում հրատապ խնդիրներից է ապագա մասնագետների՝ միջնակութային հաղորդակցմանը նախապատրաստելու հարցը, որի լուծման ճանապարհին հանդիպում ենք բազմաթիվ դժվարությունների ու խոչընդոտների, որոնցից են մշակույթների, լեզուների, ավանդույթների, սովորությունների, վարքի նորմերի, ինչպես նաև հոգեբանության և աշխարհընկալման տարբերությունները:

Միջնակութային հաղորդակցում իրականացնելիս առավելապես կարևորվում են հաղորդակցվող կողմերի հոգեբանական յուրահատկությունները, քանի որ ծագող հակասությունները հիմնականում պայմանավորված են գիտակցության ընդհանրության բացակայությամբ<sup>1</sup>: Ինչպես ցույց են տալիս հոգեբանական հետազոտությունները, անձն ընկալում է օտարալեզու մշակույթը սեփական մշակույթի ուսպնակով, այդ պատճառով նրա դիտարկումներն ու եզրակացությունները սահմանափակված են լինում վերջինիս շրջանակներով: Եվ քանի որ դա տեղի է ունենում ենթագիտակցորեն, ուստի օտարալեզու մշակույթի համապատասխան ընկալումը չի կարող կատարվել առանց համապատասխան ջանքերի գործադրման: Օտար լեզու ու մշակույթ կրողի հետ առավելագույն փոխըմբռնման ու համագործակցության հասնելու համար անհրաժեշտ է անցում կատարել սեփական մշակույթով պայմանավորված լեզվամտածողությունից դեպի օտարալեզու գիտակցություն և նոր աշխարհընկալում<sup>2</sup>:

Որպեսզի լեզուն ծառայի հաղորդակցմանը, այն պետք է հիմնված լինի իրականության միատեսակ կամ մմանատիպ ըմբռնման վրա: Լեզվական իրազեկությունը բավարար չէ միջնակութային հաղորդակցման մեջ թյուրըմբռնման խնդիրները լուծելու համար: Իրական խոսակցական իրազեկությունը անհնարին է առանց մշակութային և հաղորդակցական իրազեկության: Դրան կարելի է հասնել գիտակցության մեջ ներմուծելով համապատասխան համակարգային պատկերացումներ օտար լեզվի ու օտարալեզու մշակույթի մասին և նախադրյալներ ստեղծելով բազմալեզու գիտակցության ձևավորման համար:

Մշակութային իրազեկությունը պայմանավորված է ինչպես երկրագիտական, այնպես էլ հանրագիտական, հենքային, պատմա- և սոցիալ-մշակութային գիտելիքներով: Երկրագիտական իրակությունների ուսումնասիրման հետ մեկտեղ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել լեզվակիրների խոսքի մշակույթի և տարբեր իրավիճակներում խոսքային վարքի առանձնահատկությունների բացահայտմանը: Օտար մշակույթի ճիշտ ընկալման տեսակետից մեծ հնարավորություններ է ստեղծում, մասնավորապես, բառապաշարի ուսումնասիրումը: Այստեղ հիմնական շեշտը պետք է դրվի պատմամշակութային գործոններով

<sup>1</sup> Տե՛ս «Язык и этнический конфликт». / Под ред. М. Брилл Олкот и И. Семенова, М., 2001, էջ 100:

<sup>2</sup> Տե՛ս **А. А. Леонтьев**, *Основы психолингвистики*, М., 2003, էջ 272:

պայմանավորված իմաստների մեկնությունների, հնարավոր հարանշանակությունների և կանխենթադրությունների բացատրության վրա: Շատ դեպքերում այս կամ այն տեղեկությունը խոսքում պարունակվում է միայն ներակայորեն, ինչը մեծ դժվարություններ է ստեղծում լեզուն ուսումնասիրողի համար: Մինչդեռ ընդհանուր հենքային գիտելիքներ ունեցող լեզվակիրների համար մնան տեղեկությունները ոչ մի դժվարություն չեն հարուցում և ընկալվում են որպես ինքնըստինքյան ենթադրվող ճշմարտություններ:

Օտար լեզվի յուրացումը ենթադրում է անցում աշխարհի նոր պատկերի և դրա հետ հարաբերվող նոր լեզվական գիտակցության: Այն, ինչ մենք ընկալում ենք որպես իրականություն, իրականում ոչ այլ ինչ է, քան սոցիալապես և լեզվաբանորեն կառուցված ֆենոմեն: Ուստի, մենք ճանաչում ենք աշխարհը լեզվական ձևերի միջոցով, իսկ անձի գիտակցությունը կախված է իր մայրենի լեզվի ստերեոտիպերից: Ենթադրվում է, որ յուրաքանչյուր մարդու գիտակցության մեջ պատկերավորված է տեքստերի և բառերի զուգորդական կապերի որոշակի ամբողջություն, որը պայմանավորում է մարդու վերաբերմունքը իրականության նկատմամբ, ինչպես նաև նրա վարքը: Պատահական չէ, որ լեզվական գիտակցության ուսումնասիրության կարևոր ուղղություններից մեկը կազմում են բառերի զուգորդական կապերի լեզվաբանական և հոգելեզվաբանական հետազոտությունները<sup>3</sup>:

Բառային զուգորդությունների վերաբերյալ կատարվող հոգեբանական և հոգելեզվաբանական փորձերը ցույց են տալիս, որ մարդու հիշողության մեջ պահվող, նրա բառապաշարում եղած բոլոր բառերը փոխկապակցված են: Այդ կապերի առկայության պատճառով մարդը, մեկ բառ արտասանելով, կարծես թե արդեն իր վրա որոշակի պարտավորություններ է վերցնում այլ բառեր արտահայտելու ուղղությամբ<sup>4</sup>: Ինչպես նշվում է հոգելեզվաբանական գրականության մեջ, լեզվակրի այդ բառապաշարը՝ զուգորդություններով հանդերձ, ներկայացնում է նրա լեզվական գիտակցությունը: Եվ քանի որ անձի գիտակցությունը նմանեցված է բառերի զուգորդական կապերին՝ իրենց ամբողջության մեջ, լեզվաբանությունը փաստորեն դառնում է կենտրոնական գիտություններից մեկը, որը բացահայտում է տվյալ ազգի աշխարհի պատկերը<sup>5</sup>:

Յուրաքանչյուր լեզվամշակութային հանրույթ ունի իր աշխարհի պատկերը, որը կազմվում է լեզվական և արտալեզվական միջոցների հիման վրա: Անհնարին է սովորել լեզու առանց հաշվի առնելու այնպիսի ոչ լեզվական գործոններ, ինչպիսիք են էթնիկական, մշակութային և պատմական գործոնները: Լեզվի մեջ արտացոլված այդ գործոնների ուսումնասիրումը թույլ է տալիս ավելի լավ հասկանալ տվյալ լեզվով խոսող ժողովրդի աշխարհայացքը, քանի որ լեզուն կուտակում և պահպանում է ամբողջ տեղեկատվությունը ժողովրդի մշակույթի, նրա հոգևոր կյանքի մասին:

Աշխարհի պատկերի ազգային-մշակութային առաձևահատկությունները պայմանավորված են նրանով, որ ամեն մի ժողովուրդ արտացոլում և ընկալում է աշխարհի պատկերը իր ազգային մշակույթի տեսակետից: Որպես դրա արդյունք լեզվաբանության մեջ առաջացել է «աշխարհի էթնիկական պատկեր» հասկացությունը, որը սահմանում է, թե ինչպիսի պատկերացում ունի այս կամ այն էթնոսը իր և ուրիշների մասին:

<sup>3</sup> Տե՛ս “Русский ассоциативный словарь”. / Под ред. Ю. Н. Караулова, Ю. А. Со-рокина, Е. Ф. Тарасова, Н. В. Уфимцевой, Г. А. Черкасовой, М., 1994-1998:

<sup>4</sup> Տե՛ս **И. А. Зимняя**, Лингвопсихология речевой деятельности, М.- Воронеж, 2001, էջ 205:

<sup>5</sup> Տե՛ս **Е. Ф. Тарасов**, Язык и культура: методологические проблемы // Язык-культура-этнос, М., 1994, էջ 107:

Աշխարհի էթնիկական պատկերները՝ որպես աշխարհի լեզվական և հասկացողական (կոնցեպտուալ) պատկերների բաղադրամաս, ունեն ինչպես խոսքային, այնպես էլ ոչ խոսքային դրսևորում: Աշխարհի հասկացողական պատկերի բաղադրամաս հանդիսացող պատմամշակութային և հենքային գիտելիքները թեև պատկանում են երկրագիտության շրջանակներին, այնուամենայնիվ անմիջականորեն վերաբերում են նաև լեզվաբանությանը: Պատմամշակութային բնույթի գիտելիքների բացակայությունը կարող է ուղղակիորեն հանգեցնել տեքստի (խոսքի) թյուրըմբռնմանը, և այդ պարագայում արտալեզվական համատեքստը անմիջականորեն ընդգրկվում է հենց լեզվաբանության ոլորտի մեջ<sup>6</sup>:

Թեև միջմշակութային հաղորդակցման արդյունավետությունը մեծ մասամբ կախված է ընդհանուր հենքային գիտելիքներից, վերջիններս դեռևս բավարար կերպով ուսումնասիրված չեն: Հենքային գիտելիքները շատ դեպքերում կրում են անհատական բնույթ և կարող են տարբեր լինել տարբեր մարդկանց մոտ: Այնուամենայնիվ, մարդիկ հաճախ տիրապետում են այնպիսի ոչ գուտ մասնագիտական գիտելիքների, որոնք ընդհանուր են տվյալ մշակույթի ներկայացուցիչների համար: Ընդհանուր գիտելիքը կամ հավաքական հիշողությունը որոշակի իմաստով մարդկանց հաղորդակցվելու, համատեղ աշխատելու և ապրելու հնարավորություն է տալիս: Այդ ընդհանուր գիտելիքի ձևն ու բովանդակությունը կազմում է տվյալ լեզվամշակութային հանրույթի հիմքը, և եթե այդ գիտելիքն ընդհանուր է բավականաչափ քանակությամբ մարդկանց համար, ապա այն դառնում է ազգային մշակույթի բնորոշ հատկանիշը՝ պայմանավորելով նրա առանձնահատկությունը և յուրօրինակությունը<sup>7</sup>:

Հենքային գիտելիքները մեծ մասամբ կապված են բառապաշարի գիտելիքի հետ: Որքան ավելի մեծ է բառապաշարը, այնքան ավելի շատ են հենքային գիտելիքները, և ավելի արդյունավետ է ուսումնառությունը: Ինչպես ցույց են տալիս ամերիկյան գիտնականների հետազոտությունները, բառապաշարի ուսուցումը համազոր է հենքային գիտելիքների ձեռքբերմանը: Դա այդպես է ոչ միայն մասնագիտական տերմինների, այլև ընդհանուր օգտագործման բառերի և արտահայտությունների, այդ թվում հատուկ անունների և աշխարհագրական տեղանունների պարագայում<sup>8</sup>:

Ցանկացած ազգային մշակույթ կառուցվում է առաջին հերթին ազգային լեզվի հիմքի վրա, և ազգային ինքնանույնացման տեսակետից ազգային լեզվի իմացությունը դիտարկվում է որպես հիմնարար գործոն: Լինելով տվյալ լեզվով խոսող ժողովրդի գիտակցության կրողը և արտահայտիչը՝ լեզուն ունի և՛ բուն լեզվական, և՛ իմացական մակարդակներ, քանի որ աշխարհի լեզվական արտացոլման եղանակները միջնորդավորվում են ոչ միայն լեզվի կանոններով, այլ նաև աշխարհի այն պատկերով, որը հատուկ է տվյալ լեզվով խոսող ժողովրդի համար: Պատմամշակութային գործոնները անմիջական ազդեցություն են գործում ինչպես լեզվական, օրինակ՝ բառապաշարի, այնպես էլ իմաստային ոլորտի վրա:

Պատմական տարբեր համատեքստերում ձևափոխվում է հասկացությունների իմաստը, միևնույն հասկացությունը կամ տերմինը կարող է ընդունել միանգամայն

<sup>6</sup> Տե՛ս «Этнопсихоллингвистика». / Под ред. Ю. А. Сорокина, И. Ю. Марковина, А. Н. Крюкова и др., М., 1988, էջ 19:

<sup>7</sup> Տե՛ս E. D. Hirsch, Jr., Cultural Literacy. What Every American Needs to Know. New York, 1988, էջ 51:

<sup>8</sup> Տե՛ս Robert J. Marzano. Building Background Knowledge for Academic Achievement. Assosiation for Supervision and Curriculum Development. Alexandria, VA USA, 2004, էջ 34:

հակադիր իմաստներ: Օրինակ, եթե ոչ հեռու անցյալում «ազգայնականություն» կամ «ազգայնական» հասկացությունները ունեին բացասական իմաստ, ապա հիմա նրանք ձեռք են բերել ինչպես բացասական, այնպես էլ դրական իմաստ: Տարբեր մշակութային հանրություններում նույն անվանման իմաստը կարող է լինել ոչ միանշանակ, բազմիմաստ: Օրինակ, տարբեր ազգերի ներկայացուցիչներ տարբեր կերպ են պատկերացնում կամ զգում իրենց տվյալ ազգի ներկայացուցիչ լինելը: Տարբեր իմաստներ կարող է ընդունել էթնիկական ինքնանույնացումը նույն լեզվամշակութային հանրության տարբեր ներկայացուցիչների մոտ, ոմանք կարող են նույնիսկ չունենալ դրական էթնիկական ինքնանույնացում, տարբեր կարող է լինել էթնիկական ինքնանույնացումը տարբեր երկրներում ապրող նույն լեզվամշակութային հանրության ներկայացուցիչների մոտ:

Լեզուն հաճախ օգտագործվում է քաղաքականության և զանգվածային հաղորդակցման բնագավառում մարդկանց գիտակցության ու վարքի վրա ազդելու համար: Քաղաքական նպատակահարմարությունից ելնելով՝ հաճախ կանխամտածված կերպով տեղաշարժվում են բառերի օգտագործման ոլորտները, օգտագործվում են քողարկիչ դեր կատարող գիտական և մասնագիտական տերմիններ, որոնք կարող են անհասկանալի լինել մարդկանց լայն զանգվածների համար, բայց հարգանք ու վստահություն են ձևավորում տեղեկատվության աղբյուրի նկատմամբ: Քաղաքական և սոցիալական հարցերի քննարկման ժամանակ հաճախ են օգտագործվում բառեր, որոնք ունեն բացասական զուգորդություններ և որոշակի սոցիալ-հոգեբանական հարանշանակություններ, և, ընդհակառակը, երբեմն հարկ է լինում նախապատվությունը տալ այնպիսի բառերի, որոնք մարդկանց գիտակցության մեջ չեն առաջացնում որևէ բացասական զուգորդություն և չունեն որևէ հարանշանակություն:

Ժամանակակից մշակույթի կարևոր տարրերից մեկը պատմական հիշողությունն է, որն ունի անմիջական ազդեցություն ազգային ինքնագիտակցության վրա: Պատմական հիշողությունը ներառում է երկրի պատմության կարևոր իրադարձությունները, որոնք ձևավորում են ազգային ինքնագիտակցությունը և պայմանավորում նրա բովանդակությունը: Վերլուծելով ազգային ինքնագիտակցության վրա պատմական հիշողության ազդեցության հարցը և, մասնավորապես, դիտարկելով ազգի գոյությանը սպառնացող վտանգի ընկալումը որպես ազգային համախմբվածությանը նպաստող կարևոր գործոն՝ ակադեմիկոս Ա. Չդրավոմիսլովը այլ ազգերի թվում օրինակ է բերում նաև հայերին: Նա նշում է, որ հայերի ազգային ինքնագիտակցության բովանդակությունը, որը բնութագրվում է զգալի կայունությամբ և միասնությամբ, պայմանավորված է նրանով, որ պատմական հանգամանքների բերումով վտանգված է եղել հայ ազգի բուն գոյությունը, որ հայերը, ինչպես և հրեաները, «վերապրել են իրական ցեղասպանություն»<sup>9</sup>:

Արդի աշխարհում, երբ միջազգային իրավունքը շարունակում է ղեկավարվել երկակի ստանդարտներով, և շատ հարցեր լուծվում են ուժի դիրքերից, ազգային շահերը պաշտպանելու համար սեփական ուժերին ապավինելը, անկասկած, մնում է ազգի գոյատևման և բարգավաճման կարևորագույն երաշխիքը: Այնուամենայնիվ պետք է հաշվի առնել այն, որ ազգերը ժամանակակից աշխարհում գոյատևում են փոխներգործության մեջ՝ արտացոլվելով միմյանց գիտակցության մեջ: Ներկայումս, ինչպես գրում է Ա. Չդրավոմիսլովը, ժողովուրդների արժանապատվությունը որոշվում է ոչ այնքան անցյալի պատմությամբ և ուժային

<sup>9</sup> Տե՛ս **А. Здравомыслов**, Трансформация смыслов в национальном дискурсе // “Язык и этнический конфликт”. / Под ред. М. Брилл Олкот и И. Семенова. М., 2001, էջ 54:

քաղաքականություն վարելու հնարավորություններով, որքան այն պատկերով, որը ձևավորվում է այդ ազգի մասին այլ ազգային հանրությունների գիտակցության մեջ<sup>10</sup>: Միջմշակութային հաղորդակցման և համագործակցության տեսակետից սովյալ հանգամանքը ունի կարևորագույն նշանակություն:

Հաշվի առնելով վերոհիշյալը՝ դիտարկենք, թե ինչպիսի պատկեր է ձևավորվել Հայաստանի և հայ ժողովրդի մասին ամերիկյան հասարակական գիտակցության մեջ: Այս առումով ուշադրության է արժանի պրոֆեսոր Է. Դ. Հիրշի և նրա գործընկերների կողմից 2002 թ. հրատարակված և ազգային բեստսելեր դարձած «Մշակութային գրագիտություն. ինչ պետք է գիտենա յուրաքանչյուր ամերիկացի» բառարանը<sup>11</sup>, որը պարունակում է հասարակական կյանքի կարևորագույն երևույթներին, փաստերին և իրադարձություններին վերաբերող մոտ յոթ հազար բառ, բառակապակցություն և տերմին, որոնց իմացությունը, ըստ հեղինակների, պարտադիր է բոլոր ամերիկացիների համար: Վերոհիշյալ բառարանում ամերիկացիների համար անհրաժեշտ համարվող հենքային գիտելիքների ցանկում տեղ են գտել նաև տեղեկություններ Հայաստանի և հայ ժողովրդի մասին: Հայ ժողովրդի պատմությանը վերաբերող այլ հարցերի շարքում բառարանում, մասնավորապես, առանձնացվում է հայոց ցեղասպանության փաստը, որի մասին խոսվում է նաև «Հայկական կոտորածներ» վերնագիրը կրող առանձին բառահոդվածում: («Հայկական կոտորածները» հիշատակվում են նաև ամերիկացիների համար պարտադիր համարվող գիտելիքների այն ցանկում, որը գետեղված է ութսունական թվականների երկրորդ կեսին հրատարակված և նույնպես ազգային բեստսելեր դարձած Է. Դ. Հիրշի նույնանուն գրքում)<sup>12</sup>:

Թեև Է. Դ. Հիրշը և նրա գործընկերները խուսափել են ցեղասպանություն բառը օգտագործելուց, ինչը լեզվական ոլորտում քաղաքականության ազդեցության ևս մեկ օրինակ է, բառարանում գետեղված մեկնաբանությունները խոսում են հայերի կանխամտածված ոչնչացման, այն է՝ ցեղասպանության մասին: Այսպես, բառարանում մասնավորապես նշվում է, որ «1894-1920 թթ. հայերը զոհ են դարձել թուրքերի կողմից կազմակերպված կոտորածների», որոնց ընթացքում սպանվել են «Օսմանյան կայսրության և նրան հաջորդած թուրքական պետության սահմաններում ապրող մեծ թվով հայեր... 1915 թվականից մինչև 1920 թվականը ավելի քան մեկ միլիոն հայ է զոհվել մահապատիժների, կոտորածների, սովի և այլ պատժիչ միջոցների հետևանքով, իսկ շատերը փախել և ապաստան են գտել Միացյալ Նահանգներում և այլ երկրներում»<sup>13</sup>: Հայոց ցեղասպանության մասին տեղեկությունների գետեղումը այն հարցերի շարքում, որոնց իմացությունը համարվում է պարտադիր ամերիկացիների համար, արդեն ինքնին հատկանշական փաստ է և ապացույց այն բանի, որ հայոց ցեղասպանության հարցը կարևոր տեղ է գրավում ամերիկյան հասարակական գիտակցության մեջ:

Պատմական գիտելիքները կազմում են հենքային գիտելիքների կարևոր մասը, որոնք, սակայն, նույնպես ենթակա են սարքեր մեկնաբանությունների և իմաստների ձևափոխման ու նենգափոխման՝ համաձայն այս կամ այն քաղաքական դիրքորոշման: Այնուամենայնիվ, միջմշակութային հաղորդակցման արդյունավետության տեսակետից անհրաժեշտ է ունենալ համապատասխան

<sup>10</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 55:

<sup>11</sup> E. D. Hirsch, Jr., Joseph F. Kett, and James Trefil. *The New Dictionary of Cultural Literacy. What Every American Needs to Know*. Boston, New York, 2002.

<sup>12</sup> Տե՛ս E. D. Hirsch, Jr., *Cultural Literacy. What Every American Needs to Know*, էջ 155:

<sup>13</sup> E. D. Hirsch, Jr., Joseph F. Kett, and James Trefil. *Op. cit.*, pp. 218, 359.

պատկերացումներ լեզվակիրների համար բնորոշ հանրագիտական և հենքային գիտելիքների մասին: Հենքային գիտելիքների ուսուցումը հնարավորություն է տալիս ավելի լավ հասկանալ տվյալ ազգի մշակույթը, մտածելակերպը և աշխարհընկալումը, ազգային և համամարդկային արժեքների նախապատվությունների համակարգը, բացահայտել մտածողության և վարքի ազգային կարծրատիպերը, տալ դրանց ռացիոնալ բացատրությունը, գնահատել հասարակության մեջ գերիշխող դիրքորոշումները հասարակական կյանքի տարբեր երևույթների, իրադարձությունների և փաստերի վերաբերյալ, պարզել, թե որ հարցերն են առավել արդիական հասարակական գիտակցության մեջ: Այս ամենը էլ ավելի արդյունավետ կդարձնի միջմշակութային հաղորդակցումը և մարդկանց համագործակցությունը ամենատարբեր ոլորտներում:

Պատմամշակութային և հենքային գիտելիքները արտացոլում են ազգային մշակույթը և նպաստում են տվյալ լեզվամշակութային հանրության ազգային միասնության և համախմբվածության ամրապնդմանը: Միևնույն ժամանակ պատմամշակութային և հենքային գիտելիքների միջմշակութային համատեքստը պետք է ներառի իր մեջ ոչ միայն հարազատ մշակույթը, այլ նաև գիտելիքներ այլ մշակույթների մասին: Դա կնպաստի աշխարհի ավելի ծավալուն պատկերի ձևավորմանը, սեփական և օտար մշակույթների իմացության վրա հիմնված միջմշակութային փոխըմբռնմանը և համագործակցությանը:

**С. А. АБРАМЯН — Языковая картина мира в культурно-историческом контексте.** — Конфликты в межкультурном общении чаще всего возникают из-за отсутствия общности сознаний, что является результатом влияния разных культур, к которым принадлежат коммуниканты. Для успешной коммуникации помимо лингвистических знаний, формирующих языковое сознание, ответственное за языковую картину мира, нужны и другого вида знания. — культурно-исторические, фоновые и энциклопедические, формирующие смысловой уровень сознания. Задействование когнитивного уровня сознания, соотносимого с понятием общей картины или образа мира, необходимо для раскрытия национально-культурной специфики иноязычного сознания и формирования адекватных системных представлений об иностранном языке и иноязычной культуре в целом.